

ղաթի պատմությունը»։ Հայերենից արաբերենի կատարված թարգմանություններից հայտնի է Ագաթանգեղոսի «Պատմություն հայոցը»։ Հետագայում թարգմանվել է նաև Վարդան Այգեկցու «Ազգեսագիրքը»։ Տեր-Ղևոնդյանն իրավացիորեն նշում է, որ VIII—XIII դդ. հայ-արաբական գրական-մշակութային կապերը զեղուկ շատ քիչ են ուսումնասիրված և կարիք ունեն ընդարձակ հետազոտություն։

«Հայաստանը և արաբական խալիֆայությունը» գիրքը իրավացիորեն կարելի է համարել արժեքավոր ներդրում հայ-արաբական մշակութային կապերի զարգացման դործում և կարեւոր աշխատություն, որը կարող է օգտակար լինել արաբական շրջանի հայ պատմագրությանը հետաքրքրվողների համար։

Զ. ԳԱԳՈՒՐՅԱՆ

GUY LAFONTAINE, *La version arménienne des oeuvres d'Aphraate le Syrien*, „Corpus Scriptorum Christianorum Orientalium“ 382 Arm. 7 (texte), 383 Arm. 8 (traduction), Louvain, 1977.

ԴԻ ԼԱՖՈՆՏԵՆ, Ափրահատ Ասորու երկերի հայերեն թարգմանությունը, 2 հատորով, Լուվեն, 1977:

Բելգիայում հրատարակվող «Արևելաքրիստոնեական գրողների մատենաշարի» 382—383 հատորներում անցյալ տարի Գ. Լաֆոնտենի աշխատասիրությամբ լույս տեսան Ափրահատի ճառերի հայերեն քննական-համեմատական բնագիրը և նրա լատիներեն թարգմանությունը։ Ափրահատի դավանաբանական ժողովածուն, որն ընդգրկում է 23 ճառ՝ գրված 337—345 թթ., պատկանում է ասորական գրականության ուշագրավ հուշարձանների թվին։ Ստեղծված լինելով Պարսից տերության տարածքում, այն զերծ է մնացել հունահռոմեական ազդեցությունից և այդ պատճառով մեծ հետաքրքրություն է ներկայացնում բուն արևելյան դավանաբանական մտքի ուսումնասիրման տեսակետից։ Հատկապես նշանակալից են քրիստոնեության և հուդայականության հակասությունները լուսաբանող ճառերը։ Ինչ վերաբերում է ժողովածուի գեղարվեստական և լեզվական արժանիքներին, ապա բանասիրության մեջ այն համարվում է դասական ասորերենի լավագույն նմուշներից մեկը։

Ափրահատի ճառերի ասորերեն բնագիրն առաջին անգամ տպագրվել է 1869 թ. Վ. Ռայտի աշխատասիրությամբ¹։ Երկրորդ հրատարակությունն իրագործել է Յ. Փարիզոն 1894—1907 թթ.²։ Սակայն Ափրահատի ժողովածուն բանասիրությանը հայտնի էր այս հրատարակու-

թյուններից շատ առաջ՝ շնորհիվ նրա հնագույն հայերեն թարգմանության³։ Վերջինս ընդգրկում է ժողովածուի առաջին 19 ճառերը. XX—XXIII-ը պակասում են (ամենայն հավանականությամբ կորել են և ոչ թե չեն թարգմանվել)։ Հայերեն թարգմանությունը, հետազոտողների կարծիքով, կատարված պետք է լինի V դարի առաջին կեսին⁴։ Ափրահատի ճառերը հայ իրականության մեջ հայտնի են IV դարի մի այլ նշանավոր ասորի հեղինակի՝ Հակոբ Մծբնացու (մահ. 338 թ.) անունով։ Ընդ որում, այս վերագրումը կատարվել է շատ վաղուց, քանի որ մեզ հասած բոլոր ձեռագրերն էլ կրում են նրա անունը։ Գրքի հետ միասին Հակոբ Մծբնացուն

3 Հայերեն թարգմանության մասին մանրամասն տե՛ս. Գ. Զարբհանալյան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ—ԺԳ), Վենետիկ, 1889, էջ 20—46. I. Parisot, Aphraatis..., t. 1, էջ XXXI—XXXIX. Ե. Տեր-Մինասյան, «Զգոն» կոչված գրքի հեղինակի հարցը, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 1, էջ 257—264. նույնը՝ Ե. Տեր-Մինասյան, «Պատմա-բանասիրական հետազոտություններ», Երևան, 1971, էջ 411—424 և այլն։

4 Տե՛ս Գ. Զարբհանալյան, Մատենադարան..., էջ 44. Ե. Տեր-Մինասյան, «Զգոն»..., էջ 423։ Գ. Լաֆոնտենը հայերեն թարգմանությունը դնում է V դարի երկրորդ կեսին, տե՛ս G. Lafontaine, Pour une nouvelle édition de la version arménienne des „Démonstrations“ d'Aphraate, «Բազմալեզու», 1975, էջ 366։ La version..., „CSCO“, 382 Arm. 7, էջ IX, „CSCO“ 383 Arm. 8, էջ V.

¹ W. Wright, The Homilies of Aphraates, the Persian Sage, edited from syriac manuscripts of the fifth and sixth century in the Britisch Museum, London, 1869 (non vidi).

² I. Parisot, Aphraatis Sapientis Persae Demonstrationes, „Patrologia Syriaca“, pars I. t. 1—2, Paris, 1894—1907.

է անցել նաև Ափրահատի «Ջգօն» (Իմաստուն) մականունը, որը ձեռագրերում հաճախ փոխարինում է ժողովածուի վերնագրին: Ափրահատի ձառերի հայերեն թարգմանությունը մեծ գերկարող է խաղալ ասորական սկզբնագրի բնագրական քննության գործում, և պատահական չէ, որ վերջինիս հրատարակիչը առանձին ընթերցվածների ճշգրտման համար երբեմն դիմել է նրա օգնությանը⁵:

«Ջգօն» գրքի հայերեն բնագիրն առաջին անգամ հրատարակվել է 1756 թ. Հոռմում Ն. Անտոնելլիի կողմից, XVIII դարի մի ձեռագրի (Vat. Borg. arm. 59) հիման վրա, խաչատուր Առաքելյանի կատարած լատիներեն թարգմանության հետ միասին⁶: Մատենագիտական աղբյուրները հակասական տեղեկություններ են հաղորդում նրա վերահրատարակությունների մասին. ըստ Յ. Փարիզոյի և Ռ. Դյուվալի՝ երկրորդ անգամ այն հրատարակվել է Վենետիկում 1765 թ. և երրորդ անգամ նույնպես Վենետիկում 1788 թ. Գալլանի «Bibliotheca veterum Patrum» ժողովածուի V հատորում⁷: Վ. Ռայտը, Ի. Օրտից դե Ուրբինան և Գ. Լաֆոնտենը տեղեկություն չեն տալիս 1765 թ. տպագրի մասին և Գալլանի հրատարակությունն էլ դնում են ոչ թե 1788, այլ 1769 թ.⁸: Դժբախտարար, հրատարակությունների բացակայության պատճառով այստեղ հնարավոր չէ պարզել թյուրիմացությունը, ուստի ցանկալի կլիներ, որ Գ. Լաֆոնտենը հետագա հատորներին

մեկում անդրադառնար դրան: Ինչևէ, պարզ է միայն մի բան, որ հիշյալ հրատարակությունները Անտոնելլիի գրքի կրկնությունը եղած պետք է լինեն:

Հայերեն բնագրի հաջորդ հրատարակությունն իրագործվել է 1824 թ. Կ. Պոլսում⁹: Գրքի առաջաբանի վկայությամբ, աշխատասիրողն օգտագործել է Անտոնելլիի հրատարակությունը, ապա՝ Կոստանդնուպոլսում եղած ուշ շրջանի մի ձեռագիր, որի հիման վրա սրբագրել է առաջին ինը ձառերը, և վերջապես՝ մի բանի այլ ձեռագրեր բնագրի շարունակությունը վերականգնելու համար. «Ի ժողովել մեր զձեռագիրս, գտաւ աստանօր ձեռագիր մի ի գրեանց հանգուցեալ յօհաննէս Պատրիարգին կոստանդնուպօլսեցոյ, որ թէպէտ նոր էր և իսպառ տկար ի յարմարագրութենէ, բայց օրինակ նորուն՝ ծանուցաւ ընտրելագոյն. և շատ էր մեզ թէ և այն լինէր լրացեալ, որ ի սկզբանէ գործոյս եղև մեզ առաջնորդ յընթացս սրբագրութեան մինչ ի լրումն գրէթէ իններորդ ձառին. ուրանօր աւարտմամբ թողեալ զմեզ գնալ ընթանալ ընդ խորագիտ վայրս դժուարին. ընկերելով այլոց ձեռագրացս¹⁰: Ինչպես տեսնում ենք, հրատարակիչը լուրջ քննադատական մոտեցում է հանդես բերել բնագրի վերականգնման աշխատանքներում, լիովին օգտագործելով իր ձեռքի տակ եղած միջոցները, որոնց շնորհիվ կարողացել է վերացնել առաջին հրատարակության բազմաթիվ թերությունները: Ահա թե ինչպիսի զնահատանքի է արժանացել նրա կողմից Անտոնելլիի հրատարակությունը. «Այո, այն գիրք Թեժաղիր. որ ցարդ երևի, ոչ սակաւ աշխատութեամբ աւարտեալ յամենեցունց վկայի, այլ ըստ անհարազատութեանն զգուշանալի, վասն զի որ տպագրեցինն զայն ի հոռմմ, շունին առ իւրեանս գաղափար ընտիր, այլ մի ևեթ ձեռագիր, որոյ անհարազատութեանն վկայեն ստացօղք այնր ձեռագրին»¹¹: Կոստանդնուպոլսյան հրատարակության ուշագրավ արժանիքներից է այն, որ նա լրացրել է Անտոնելլիի բնագրում պակասող վեց խոշոր հատվածներից հինգը (չունի միայն 5-րդը): Սակայն որքան էլ ընտիր՝ կոստանդնուպոլսյան հրատարակությունն այժմ

⁵ Հմմտ. I. Parisot, Aphraatis..., t. 1, էջ 1—2, 23, 48, 66, 265—266, 277—278, 407, 503 և այլն:

⁶ N. M. Antonellus, Sancti Patris nostri Jacobi episcopi Nisibeni Sermones. Cum Praefatione, Notis et Dissertatione de Ascetis, quae omnia nunc primum in lucem produent, Romae, 1756 (non vidi).

⁷ I. Parisot, Aphraatis..., t. 1, էջ XXXII. R. Duval, La littérature syriaque, Paris, 1907, էջ 218 (ըստ Ռ. Դյուվալի՝ 1788 թ. հրատարակությունն ընդգրկում է միայն հայերեն բնագրի լատիներեն թարգմանությունը): 1765 թ. հրատարակությունը հիշատակում է նաև Ա. Բաումշտարկը, սակայն որպես հրատարակության վայր նշելով Վիննան. տե՛ս A. Baumstark, Geschichte der Syrischen Literatur, Bonn, 1922, էջ 31:

⁸ В. Райт, Краткий очерк истории сирийской литературы, СПб., 1902, էջ 23 (Վ. Ռայտը չի նշում Գալլանի հրատարակության տարեթիվը). I. Ortiz de Urbina, Patrologia syriaca, Romae, 1958, էջ 45; G. Lafontaine, Pour une nouvelle édition..., էջ 367:

⁹ «Գիրք որ կոչի Ջգօն, արարեալ Սրբոյն Յակոբայ երիցս երանեալ Հայրապետին Մըծրին քաղաքի՝ ըստ խնդրոյ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, սակս մանկանց նորոյս սիրվին: ...Արդեամբք և ծախիւք առն ազգասիրի և բարեպաշտի ականեցի մահտեսի Յօհաննեան մահտեսի Աբրահամ ամիրայի», Կ. Պոլիս, 1824:

¹⁰ Նույն տեղում, «Յառաջաբան»:

¹¹ Նույն տեղում:

այլևս, մանավանդ Ափրահատի ճառերի ասորական բնագրի գյուտից հետո, չէր կարող բավարարել արդի բանասիրության պահանջները: Չնչին կլիներ նրա ծառայությունը նաև գրքի նոր՝ քննական-համեմատական բնագրի պատրաստման գործում: Դա է պատճառն, ըստ երևվոյթի, որ Գ. Լաֆոնտենն իր աշխատության մեջ հաշվի չի առել այդ հրատարակության տրված լայնները, թեև ինչ-ինչ օգուտ նրանից այնուամենայնիվ կարելի էր քաղել:

Գ. Լաֆոնտենի հրատարակության առաջին երկու պրակներն ընդգրկում են «Զգոն» գրքի I—V ճառերի հայերեն բնագիրն ու լատիներեն թարգմանությունը: Հայերեն բնագիրն նախորդում է մի ոչ ծավալուն ներածություն (էջ IX—XXVII), որտեղ հեղինակը մանրամասնորեն նկարագրում է իր օգտագործած ձեռագրերը, ներկայացնում ընդօրինակությունների խմբաբաժանումները և բնագրի պատրաստման սկզբունքները¹²: Մի փոքրիկ առաջաբան է կցված նաև լատիներեն թարգմանությունն ընդգրկող պրակին (էջ V—VI):

Գ. Լաֆոնտենն օգտագործել է «Զգոն» գրքի 35 հայտնի ընդօրինակություններից 12-ը. նրեվանի Մաշտոցի անվ. Մատենադարանի № 496 (1669 թ., E օրինակ), 497 (1671 թ., F), Նոր-Ջուղայի № 387 (1797 թ., N), Տյուրինգենի Արքայական համալսարանի գրադարանի arm. Ma XIII 95 (1623 թ., R), Հռոմի վատիկանյան գրադարանի arm. B 59 (1740 թ., S), arm. V 9 (1719 թ., T), Վենետիկի Մխիթարյան մատենադարանի № 98 (XVIII դ., U), 194 (XV—XVI դդ., V), 360 (XVIII դ., W), 562 (XVIII դ., X), 1357 (XVIII դ., Y), 254 (XV—XVI դ., Z): Հրատարակության համար հիմք է ընդունվել Մաշտոցի անվ. Մատենադարանի № 497 ձեռագիրը, որն ընդօրինակված է 1671 թ. Ագուլիսում:

¹² Նույն հարցերը Գ. Լաֆոնտենը քննել է նաև իր մի այլ աշխատության մեջ. տե՛ս G. Lafontaine, Pour une nouvelle édition..., էջ 365—375.

Ինչպես ցույց է տվել Գ. Լաֆոնտենը, նշված 12 ընդօրինակությունները որոշակիորեն բաժանվում են 3 խմբի՝ UV, EF և WY: Հետևյալ չորս ձեռագրերը՝ NSTX, թեև ի հայտ են բերում որոշ ընդհանրություններ, սակայն դա թույլ չի տալիս դրանք միավորել մի խմբում, քանի որ ամեն մեկն աչքի է ընկնում նաև ընդգծված յուրահատկություններով: R ձեռագիրը, որն ընդգրկում է միայն IV ճառը, հարում է UV խմբին, իսկ Z-ը, որն ընդգրկում է միայն VIII և X ճառերը՝ EFUV ընդօրինակություններին: Ընդօրինակությունների խմբավորումը կատարված է հետևյալ առանձնահատկությունների հիման վրա. ա) ձեռագրի բովանդակությունը, բ) ճառերի դասավորությունը, գ) բնագրի պակասավոր մասերը, դ) Անտոնելլիի հրատարակության համեմատ ունեցած 6 խոշոր հավելումները, ե) առանձին տողերի հավելումներն ու բացթողումները, զ) իմաստային տարբերությունները:

Գ. Լաֆոնտենի հրատարակության արժեքը բոլորովին չի կարող նսեմացնել այն փաստը, որ հեղինակն օգտագործել է գոյություն ունեցող ընդօրինակությունների միայն մեկ երրորդը: Համեմատությունը ցույց է տալիս, որ «Զգոն» գրքի բազմաթիվ ձեռագրերը, ժամանակով իրար մոտ լինելով, իրարից էական տարբերություններ չունեն, և նոր օրինակների ընդգրկումը գիտությանը նշանակալից օգուտ չէր կարող տալ: Ուստի միանալով Գ. Լաֆոնտենին, կարող ենք նրա հետ միասին կրկնել, որ նորատիպ բնագիրը ճշատ ավելի լրիվ է, շատ ավելի մոտ ասորականին և շատ ավելի ճշգրիտ, քան այն, որը մինչ այժմ հայտնի էր Անտոնելլիի (կարելի է ավելացնել՝ նաև Կոստանդնուպոլսի—Լ. Տ.-Պ.) հրատարակությամբ¹³:

¹³ G. Lafontaine, La version..., „CSCO“ 383 Arm. 9, էջ V: